ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
МЕРДЗАВАНСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

05.10.2011թ.
թիվ 193

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. Ս.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ

Ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի առաջին մասի, Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավարի 2011թվականի սեպտեմբեր ամսվա ընդունած որոշումները և արձակած կարգադրություններ չկան:

Առդիր 4/չորս/ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

9363-11
«06» 10 2011 г.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<27>> սեպտեմբերի 2011թ. N 30

## *ՍԵՐՅՈԺԱ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՎԱՐՁԱԿԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՕՐԴԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 660-662-յ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենք 37-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2011 թվական սեպտեմբերի 26-ի N03 որոշումը, համայնքի բնակիչ Սերյոժա Մկրտչյանի 2011 թվական սեպտեմբերի 20-ի դիմումը.

*որոշում եմ՝*

1. Համայնքի հաշվեկշռում հաշվառված Երնանյան խճուղի թիվ 65 շենքի N36 բնակարանայ ֆոնդի 115.9 քմ ընդհանուր մակերեսով բնակարանի վարձակալ ճանաչել համայնքի բնակ Սերյոժա Մկրտչյանին և սահմանված կարգով տրամադրել բնակելի տարածության օրդե համաձայն N1 հավելվածի:
2. 2011 թվականի սեպտեմբերի 26-ից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Մերձավան գյուղական համայնքի բնակիչ Սերյոժա Մկրտչյանի հետ սահմանված կարգով կնք բնակելի տարածության վարձակալության պայմանագիր՝ համաձայն N2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

*2011 թվականի սեպտեմբերի 27,*
*գյուղ Մերձավան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<23>> սեպտեմբերի 2011թ. N -29-

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N88 որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան գյուղական համայնքի բնակիչ Սերյոժա Մկրտչյանի 2011 թվականի սեպտեմբերի 20-ի դիմումը.

որոշում եմ՝

1. Փոփոխել համայնքի հաշվեկշռում հաշվառված Երևանյան խճուղի թիվ 65 շենքի N36 հանրակացարանի շենքի գործառնական նշանակությունը բնակարանի և ընդգրկել բնակարանային ֆոնդում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ*

*2011 թվականի սեպտեմբերի 23,*
*գյուղ Մերձավան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2011 թվականի թիվ 28

## ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ՍԵՐՅՈԺԱ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17- րդ կետով, հիմք ընդունելով այն, որ Սերյոժա Մկրտչյանը դիմել է հանրակացարանի նկատմամբ վարձակալության պայմանագիրը լուծելու խնդրանքով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Չեղյալ համարել համայնքի ղեկավարի 19.02.2004 թ. թիվ 04 որոշումն և դրա հիման վրա նախկին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի Երևանյան թիվ 13 շենքի 1-ին հարկի /ներկայիս հասցեն՝ Երևանյան խճուղի թիվ 65 շենք թիվ 36/ հանրակացարանի նկատմամբ 20.02.2004թ. կնքված վարձակալության պայմանագիրը լուծել :
2. Կքել համաձայնագիր Երևանյան թիվ 13 շենքի 1-ին հարկի /ներկայիս հասցեն՝ Երևանյան խճուղի թիվ 65 շենք թիվ 36 / հանրակացարանի նկատմամբ վարձակալության պայմանագիրը լուծելու մասին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2011թ. սեպտեմբերի 23
գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ

17 սեպտեմբերի 2011թվականի թիվ 27

## ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով , Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքում 2011թվականի սեպտեմբերի 17-ին կայացած աճուրդային կարգով հողի վաճառքի արդյունքները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքում 2011թվականի սեպտեմբերի 17-ին կայացած 0,6038հա արտադրական նշանակության հողակտորի աճուրդային կարգով վաճառքի արդյունքները:

2.0,6038հա արտադրական նշանակության հողակտորի /լոտ 1, ծածկագիր 04-065-514-030/ աճուրդային վաճառքի արդյունքում հաղթող ճանաչված Ալեքսանդր Նորիկի Կազումյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2011 թվականի սեպտեմբերի19

գ. Մերձավան